ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 403-Ա/2 **24.03.2023 թ.**

«100 ԳԱՂԱՓԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ» ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2016 թվականի մայիսի 4-ի «100 գաղափար Հայաստանի համար հանրապետական երիտասարդական մրցույթի անցկացման կարգը, անվանակարգերը և հայտի ձևը հաստատելու մասին» N 83-Ա/1 հրամանի հավելված N 1-ի 5-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել «100 գաղափար Հայաստանի համար» նորարարական նախագծերի և գիտատեխնիկական մշակումների համահայկական մրցույթի կազմկոմիտե (այսուհետ՝ Կազմկոմիտե) և հաստատել Կազմկոմիտեի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի № հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

«100 ԳԱՂԱՓԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ» ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

1.	Արթուր Մարտիրոսյան՝	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (Կազմկոմիտեի նախագահ),
2.	Զարա Ասլանյան՝	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ (Կազմկոմիտեի անդամ),
3.	Հենրիկ Միրզոյան՝	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության բարձր տեխնոլոգիաների վարչության պետ (Կազմկոմիտեի անդամ),
4.	Գևորգ Վարդանյան՝	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ԱՊՀ երկրների հետ հարցերով փորձագետ (Կազմկոմիտեի անդամ),
5.	Գրետա Մնացականյան՝	ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ծրագրերի իրականացման և մշտադիտարկման վարչության ծրագրերի մշտադիտարկման բաժնի պետ (Կազմկոմիտեի անդամ),
6.	Հայկուհի Գևորգյան՝	ՀՀ էկոնոմիկայի նախարարության գիտելիքահենք տնտեսության վարչության փորձագետ (Կազմկոմիտեի անդամ),
7.	Արման Վալեսյան՝	ՄԱԶԾ, կայուն համայնքների ծրագրերի ղեկավար (Կազմկոմիտեի անդամ),

8.	Գեղամ Ռոստոմյան՝	«ԱԿԲԱ ֆեդրացիա» ՓԲԸ-ի՝ համայնքների հետ տարվող աշխատանքների գծով պատասխանատու (Կազմկոմիտեի անդամ),
9.	Հասմիկ Ալեքսանյան՝	Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖԻ երիտասարդական ծրագրերի ղեկավար (Կազմկոմիտեի անդամ),
10.	Լուսինե Ղուկասյան՝	Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի «Հայաստանում աշխատուժի զարգացման» ծրագրի ղեկավարի տեղակալ (Կազմկոմիտեի անդամ):